WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

Տեղեկանք

Տրվում է առ այն, որ բուժառու Սուսաննա[redacted] ծնված [redacted]23թ, 20/07/23-ից հոսպիտալացվել է Ուիգմոր հիվանդանոցում Տենդ առանց օջախի ախտորոշմամբ: Երեխան 10.07-ից սկսել է ջերմել է ֆեբրիլ թվերի վրալ 2 օր , ունեցել է քթից հոսք, հազ, ապա ունեցել է ջրիկ կղանք , որը դինամիկայում դարձել է կիսաձևավորված, 12.07-13.07 չի ջերմել, ապա 14.07-ին կրկին սկսել է ջերմել 1 օր ֆեբրիլ, ապա կրկին չի ջերմել: 18.07-ից վերսկսել է ջերմել ֆեբրիլ թվերի վրա 2 դրվագ, եղել է թույլ, դիմել են Ուիգմոր հիվանդանոց և հոսպիտալացվել: Անամնեզում մոտ կես տարի առաջ ֆեբրիլ ՄԻ:

Օբյեկտիվ զննումով- Ընդունվելիս երեխայի ընդհանուր վիճակը միջին ծանրության է՝ պայմանավորված երկարատև տենդով, մեզի քանակի քչացմամբ: Գիտակցությունը՝ պարզ, մ/օ սիմպտոմատիկա չունի, մաշկը ՝ մաքուր, քիչ գունատ, չոր, տ/լ քիչ չոր, տուրգորը՝ նվազած, լիմֆատիկ հանգույցները չեն շոշափվում, բկանցքը՝ հանգիստ: Օտոսկոպիկ՝ թ/թ 2 կողմից հանգիստ, առանց արտափքման, աուսկուլտատիվ՝ վեզիկուլյար շնչառություն, սրտի տոները՝ պարզ, ռիթմիկ, որովայնը՝ պալպատոր փափուկ, հանգիստ, չափավոր հեպատոսպլենոմեգալիա, միզարձակությունն ազատ, դիուրեզը նվազած ըստ ծնողի խոսքերի:

Լաբորատոր-չափավոր բորբոքային ակտիվություն- ՑՌՍ-36 մգ/լ,արյան ընդհանուր քննություն- հեմոգլոբին 103 գ/լ, թրոմբոցիտներ- 131* 10^9/L, մեզի ընդհանուր քննությամբ – չափավոր լեյկոցիտուրիա, գնահատվել է միզուղիների վարակ, վերցվել է մեզի մանրէաբանական քննություն, սկսվել է հակաբակտերիալ բուժում, ինչի ֆոնին սկսել է չջերմել: Մեզի մանրէաբանական քննության արդյունքը գնահատվել է որպես կոնտամինացիա, հակաբակտերիալ բուժումը դադարեցվել է, դինամիկ արյան ընդհանուր քննությամբ՝ հեմոգլոբին 115 գ/լ, թրոմբոցիտներ՝ 143 *10^9/L: 24/07-ից կրկին սկսել է ջերմել: Կատարվել է ինֆեկցիոնիստի կոնսուլտացիա: Հաշվի առնելով բնակության էնդեմիկ օջախը, թրոմբոցիտոպենիան, հեպատոսպլենոմոգալիան, անամնեզում պարբերաբար կրկնվող ջերմության դրվագները, էպիդ անամնեզը՝ բնակվում են Լոռվա մարզում, ընթացք է տրվել Լեյշմանիա IgG՝ դրական, IgM՝ բացասական:
Ախտորոշվում է Վիսցերալ լեյշմանիոզ:
Անհրաժեշտ է 1 նմուշ ուղարկել ՀՎԿԱԿ ախտորոշման հաստատման նպատակով:
Բուժումը՝ Ամֆոտերիցին Բ լիպոսոմալ (Ամբիսոմ) 21մգ/կգ ամբողջական դեղաչափով:
Երեխայի քաշը՝ 16,5 կգ, պահանջվող դեղորայքը՝ 350 մգ /7 սրվակ/:

Մանկաբուժական ծառայության պատասխանատու՝ Սեդա Հարությունյան

27/07/26

«ՈՒԻԳՄՈՐ ԳՐՈՒՓ»
"WIGMORE GROUP"